

ՍՈՒՐԻՈՅ ՀԻՒՍԻՍԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԲՆԻԿ ՀԱՅՈՑ ՈՒՒՏԱՎԱՅՐԵՐԸ

ՅԱԿՈԲ ՉՈԼԱՔԵԱՆ (hagopcholakian@hotmail.com)

ՄՈՒՏՔ

Սուրիոյ հիւսիսարեւմտեան շրջաններուն մէջ հայոց ներկայութիւնը դարերու խորութիւն ունի. Տիգրան Մեծի օրով Անտիոքը կը դառնայ փոխարքայութեան մայրաքաղաքը՝ տէրութեան հարաւային թագաւորանիստը. հայեր կը վերաբնակեցուին շրջանին մէջ: Ըստ յոյն, լատին ու մանաւանդ արաբ պատմագիրներու եւ ժամանակագիրներու՝ միջին դարերուն հայոց ներկայութիւնը մեծ խտութիւն մը կը ներկայացնէ Սեւ լեռներուն վրայ, Ռորոնդէսի միջին եւ վերին հովիտներուն մէջ, մանաւանդ Անտիոք, Սելեւկիա, Լաուդիկէ եւ Աֆամիա քաղաքներու շրջանակին մէջ: Ահաւսիկ, այդ բնիկ հայութենէն ԺԸ.-ԺԹ. դդ. մնացած հայ բնակչութեան բնակավայրերն էին Պէլլանի, Մուսա Լեռան եւ Քեսապի գաւառակները, Ռորոնդէսի հովիտին մէջ Եագուպիէ եւ Գնիէ, Տերիւս լեռան Արամօ եւ Ղնեմիէ, Պոտամայի սահարաի եւ Օրտուի գաւառի հարաւը ցրուած գիւղերը:

Յօդուածը նիւթ կ'ընէ այս բնիկ հայութեան սրբավայրերն ու ուխտավայրերը: Դժբախտաբար, բացի գործող եկեղեցիներէ, մեզի ոչինչ փոխանցուած է Պէլլանի գաւառակի սրբավայրերէն, մինչ ննթադրելի է, որ Սեւ լեռներու այս հատուածին մէջ հայերը պէտք է ունեցած ըլլային մեծ թիւով եկեղեցական եւ վանական կառոյցներ, որոնց հետ բարեպաշտական աղերսներ պէտք է ունեցած ըլլային բնիկները: Այդ ուղղութեամբ ոչ մէկ տեղեկութիւն ունինք միջին դարերուն Ամըգի դաշտի արեւելեան հարեանտութեամբ գտնուող հայ մեծ բնակավայրերուն՝ Գոմ, Անապ, Արթահ, Հարէմ եւն., ինչպէս նաեւ Ռուճի հովիտի նախկին հայ բնակավայրերուն, Անտիոք եւ Լաթաքիա քաղաքներու միջնադարու հայոց սրբավայրերու մասին: Դարձեալ՝ շատ քիչ բան փոխանցուած է մինչեւ Ի. դարու առաջին տասնամեակները յիշուող Պոտամայի սարահարթի եւ Օրտու գաւառի հարաւը ցրուած հայոց սրբավայրերուն մասին:

Այստեղ մեր տեղեկութիւնները գլխաւորաբար կը վերաբերին Մուսա Լեռան եւ Քեսապի գաւառակներուն, Ռորոնդէսի հովիտի Եագուպիէ եւ Գնիէ, ու Տերիւս լեռան Արամօ եւ Ղնեմիէ գիւղերուն:

Մեր դիտարկումները կատարուած են համապատասխան գրականութեան եւ մեր դաշտային աշխատանքներուն հիման վրայ:

ՈՒՒՏԱՎԱՅՐԵՐ, ԱՆՈՒԱՆ ՈՒ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐ

Սուրիոյ հիւսիսարեւմտեան շրջաններու բնիկ հայոց ուխտավայր կը հանդիսանան սրբավայրերու երեք խմբաւորումներ.-

ա.- Յայտնի կամ անանուն «կիղիցիկներ» եւ անշուք սրբավայրեր.

բ.- Միջնադարեան վանական կառոյցներու աներակներ.

գ.- Գործող եկեղեցական կառոյցներ՝ եկեղեցիներ ու մատուռներ, «ի հնուց անտի» կամ նորաշէն:

ա) Կիղիցիկները

«Կիղիցիկ»ները (եկեղեցի-իկ) փոքրիկ տարածքներ են, ուր կ'երեւին եկեղեցական կամ այդպէս կարծուած կառոյցի մը յետին մնացորդները՝ խորան մը, մկրտութեան ամբիւն մը, փոքրիկ խաչքար մը կամ պատին՝ խաչաքանդակ մը, պատերու հիմքեր, խոյակ մը, խարիսխ մը, տապալած սիւն մը, տապանաքար մը եւն.: Հազուագիւտ են կանգուն կառոյց ունեցող կամ իբրեւ այդպիսին յիշուող կիղիցիկները, թէւ բոլորն ալ կը յիշատակուին իբրեւ նախկին եկեղեցիներ: Կիղիցիկները շատ են մանաւանդ Քեսապի շրջանին մէջ, ինչպէս Գարատուրան գիւղի Ս. Գէորգը, նոյն գիւղի Վերի թաղի կիղիցիկը, Քեսապի մօտ Սամասի Ս. Մարութէն, Արամոյի Ս. Թորոսը:

Կիղիցիկները մեծամասնութեամբ կը գտնուին նախկին կամ գործող գերեզմանատուներու տարածքին մէջ, ունին առաւել խնամուած սուրբ ծառ մը, փշակաղնի (արաբ.՝ *սընտիհան*)¹ կամ դափնի (արաբ.՝ *դար*), հազուադէպօրէն նաեւ սօսի եւ ձիթենի²:

Իբրեւ կիղիցիկ կը յիշուին նաեւ վիմափոր կամ բնական քարայրներ, որոնք հաւանաբար եղած են ճգնարաններ կամ դամբարաններ: Կիղիցիկներու պէս պաշտամունքի առարկայ կը դառնան նաեւ աղբիւրներն ու ծառերը, ինչպէս Ս. Սարգիսի քարայրը եւ Ս. Մարտիրոսի աղբիւրը Մուսա Լեռան Քեպուսի գիւղին մօտ, Ս. Ուրբաթի քարայրը Եողունօլուքի մօտ, Խտըրպէկի սօսի ծառը եւն.³:

Կիղիցիկներէն ոմանք անհատական ուխտեր կ'ընդունին. անցորդ մը կը մտնէ խաչ մը կը հանէ, մտովի աղօթքը կ'ընէ, «խընդրուածք» մը կը ներկայացնէ (հիւանդի ապաքինում, ճամբորդ հարազատի բարի երթ, զակի մը ծնունդը կամ յղի կնոջ բարի ազատում եւն.), ապա քովի ծառի մէկ ճիւղին *ադար* (բարբառ՝ *ադդուօր*, ուխտի նշան՝ լաթի երիզ մը) կապելով կը հեռանայ: Կրնայ աքլոր մը զենել ու տալ դրացիի մը. այդպիսի մատաղը տուն չեն տանիր:


Կարգ մը կիղիցիկներ թաղային ուխտավայրեր են. թաղեցիները կը հաւաքուին ծառին տակ, մէկը իր մատաղը քարին վրայ կը զենէ, կը նստին,

¹ Մեր տեսած բոլոր ոչ-քրիստոնեայ սրբավայրերն ալ շրջապատուած են փշակաղնիի պտրակով:

² Կիղիցիկներու մասին տե՛ս՝ Յակոբ Չոլաքեան, «Քեսապի շրջանի եկեղեցական հին կառոյցները յարանաւանական համայնքներու բաժանումէն առաջ», *Հայագիտական հարցեր*, 1(16):2019, էջ 103-20:

³ *Յուշամարտեան Մուսա Լեռան*, խմբ.՝ Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, հրատ.՝ Ճեպէլ Մուսայի հայրենակցական միութեան, Տպ. Ատլաս, Պէյրութ, 1970. տե՛ս՝ Մուսա Լեռան գիւղերու նկարագրութեան բաժինները:

շուրջը կը մաքրեն, ուխտապուր կը պատրաստեն: Ուխտապուրը՝ *կիդիցիկէ-պէօր*, մատաղի միսով պատրաստուած սխետով փիլաւ է: Միասին կ'ուտեն, «ուխտդ ընդունելի ըլլայ» կ'ըսեն, ժամանակ կ'անցընեն:



Սուրիոյ հիւսիս-արեւմտեան շրջաններու

Միջնադարեան քրիստոնէական վանական կառոյցները

Սուրիոյ հիւսիսարեւմտեան շրջաններուն միջնադարեան քրիստոնէական վանական կառոյցները շատ են. ոմանք կառուցուած են վաղ միջնադարուն, ոմանք՝ ԺԱ.-ԺԳ. դարերուն եւ յետագային աւերուած, ուրիշներ՝ կանգուն ու գործուն էին մինչեւ ուշ միջնադար: Կանգուն ու գործող կառոյցներ գրեթէ չեն մնացած ներկայիս: Անտիոքի շրջանի միջնադարու հայ հոծ

գաղթականության տարածքին մէջ - նկատի ունիմ հարաւի Ալաուի լեռներէն ու Որոնդէսի միջին հովիտէն ու Աֆամիայէն հիւսիս - Ռուճի հովիտին մէջ, Կասիոս լեռան լանջերուն, ապա Անտիոքէն հիւսիս երկարող Սեւ լեռներուն վրայ կան բազմաթիւ միջնադարեան քրիստոնէական կառոյցներու ւաւերակներ՝ եկեղեցիներ, վանքեր, միանձնեայ ճգնարաններ: Հայ հին գաղթականութեան յետնորդները, ինչպէս կ'երեւի ԺԹ. դարէն եկող վկայութիւններէն, բարեպաշտական կապեր ունեցած են անոնց հետ ու զանոնք վերածած՝ յատկապէս համաժողովրդական ուխտավայրերու: Անոնց հետ կապուած են հայկական հաւատալիքներու շատ երեսոյթներ ու ծէսեր, ինչպէս՝ Արամոյի վանքը, Եագուպիէի Ս. Գէորգը (Ս. Աննան), Կասիոսի Պարլում/Պալլումը: Յատկապէս անոնք մեծ խտութիւն մը կը ներկայացնէին Սեւ լեւկիայէն հիւսիս մինչեւ Իսոսի ծոց եւ անկէ մինչեւ Մարաշ երկարող Սեւ լեռներուն վրայ: Սեւ լեռներուն հարաւային բաժնին մէջ, պատմական Սելեւկիա քաղաքէն հիւսիս-արեւելք կը գտնուէին Սուետիոյ կամ Մուսա Լեռան հայ գիւղերը: Մուսա Լեռան բոլոր գիւղերուն կից կը գտնուին բազմաթիւ միջնադարեան եկեղեցական կառոյցներ, վանքերու ւաւերակներ ու ճգնարաններ, դամբարաններ, որոնց հետ բարեպաշտական աղերսներ ունէին մուսալեռցիները. անոնք սիրելի ուխտավայրեր էին իրենց համար⁴: Դժբախտաբար Կիլիկիոյ սահմանակից, հայոց կողմէ յիշատակուող Դարպասկէն հարաւ, Պաղրասի բերդի հարեանութեամբ գոյատեւող Պէլլանի շրջանի հայոց ուխտավայրերուն մասին բան չէ փոխանցուած մեզի: Բացի գործող եկեղեցիներէ՝ ոչինչ ունինք այլ սրբավայրերու մասին:

Սեւ Լեռներ

Պատմութիւնը կը վկայէ Ամանոսեան լեռնաշղթայի հարաւային բաժնի՝ Սեւ լեռներու հայոց սուրբ վայրերուն մասին: Գրիգոր Վկայասէր կաթողիկոս կը գրէ. «Հասար ի սուրբ լեռոնն, զոր Սեաւն կոչին, ի մեր սեփական պարգեւական եկեղեցիքն յուսսն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ պառ-

⁴ Քեսապի Պարլումի, Մուսա Լեռան եւ Արամոյի միջնադարեան վանական համալիրներու մասին տես՝ J. Mésérian, S. J., *Expédition archéologique dans L'Antioche Occidentale*, Beyrouth, 1964. նաեւ՝ Wachtang Djobadze, *Archeological investigations in the Region West of Antioch on the Orentes*, Stuttgart, 1986. նաեւ՝ *Յուշամատենան Մուսա Լեռան*, էջ 73-75, 78-79, 83-84, 90-96, 100, 106, նաեւ՝ Յակոբ Չոլաքեան, «Կասիոս լեռը Անտիոքի շրջանի հայոց աւանդազրոյցներուն եւ հաւատալիքներուն մէջ», *Աւանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում 1*, հրատ. ՀԱԻ, Երեւան, 2018, էջ 313-327. նաեւ նոյնին՝ «Համալուծիէ գիւղի աշտարակին 1348 թ. հայերէն արձանագրութիւնը», *Վէմ համահայկական հանդէս*, 2(62):2018, էջ 144-154. նաեւ նոյնին՝ «Արամո գիւղի մօտիկ հայոց վանքը Ս. Աստուածածին եւ Ս. Գէորգ եկեղեցիներով», *Բանբեր Երեւանի համալսարանի*, 2(34):2021, էջ 30-44:

լահոյ կոչի, որ թարգմանի դրախտ Աստուծոյ»⁵: Ուրեմն՝ պառլահոյ կը նշանակէ «դրախտ Աստուծոյ» ու ընդհանուր անունն է Սեւ լեռներուն եւ ոչ թէ Քեսապի Պարլումը, ինչպէս ոմանք կը կարծեն⁶ կամ առանձին վանք մը: «Այդ անունով վանք չկայ: Արդ, պառլահոն որոշ վանքի մը անունը չէ եղած, այլ «սուրբ տեղիք» կոչուելու արժանի վայր, Աստուծոյ դրախտը յորջորջուելու յարկութիւններով օժտուած սրբատեղիներով լեցուն տարածք»⁷:

Սեւ լեռներու վանքերը, անապատներն ու ճգնարանները, կը պատկանէին քրիստոնէայ տարբեր ազգերու, դաւանանքներու. կային ասորական, հայկական, յունական, վրացական, լատին վանքեր ու ճգնարաններ, տեղ-տեղ խառն էին՝ հայ-ասորական, յունական-վրացական են.: ԺԱ. դարու հայ պատմագիր Արիստակէս Լաստիվերցին կը պատմէ հետեւեալ դրուագը Հալէպի վրայ արշաւող բիւզանդացի Ռոմանոս Գ. կայսեր մասին, որ տեսնելով լեռան վանականներու բազմութիւնը («հերետիկոս» բառով կ'անկարկէ հայ ու ասորի վանականները)՝ կը հրամայէ բոլորը բանակ տանիլ:

Սա յառաջին ամի իւրոյ թագաւորութեանն՝ զօրաժողով լինի, եւ ճանապարհ առն ի կողմանս Անտիոքացոց. եւ կամէր երթալ ի վերայ քաղաքին որ կոչի Հալպ, առնուլ ասերել զնա: Եւ եկեալ հանդիպի լերինն որ կոչի Սեաւ, եւ տեսանէ անդ բազմութիւն վանորէից եւ զմենաստանս մենակեցաց, որք ի մարմնի գոլով զանմարմնոցն բերէին զնմանութիւն: Որք միով այծէիւ կամ բաճկոնաւ շատանան, զՅովհաննու բերելով զնմանութիւն բայց միայն զի նա մարախով եւ վայրենի քաղցու կերակրեալ լինէր, իսկ սոքա երկաթի բրիչ ձեռն առեալ՝ խոնջեալ աշխատին ի գարի սերմանեաց պատրաստեալ զօրապահիկն կերակուր: Այլ զզանազան խորտիկս եւ զքաղցրահամ կերակուրս հանդերձ ուրախարար գինով զոր մատուակեն որթք այգեաց, զայսոսիկ զամենեսեան աշխարհասիրացն թողին: Ի գլովս լերինն բարձրացեալ նախամարգարէին կաճառակից գոլով՝ միշտ ընդ Աստուծոյ խօսին: Չսոսա տեսեալ թագաւորին՝ հարցանէր արժանաւորաց իւրոց. զի՞նչ են այն բազմութիւն հերետիկոսացն: Եւ նոքա ասեն. սոքա ամենեքեան երամբ աղօթողաց են, որք աշխարհի խաղաղութեան եւ կենաց ձերոց առողջութեան միշտ խնդրուածս առնել: Պատասխանի տուեալ թագաւորն ասէ. չէ ինձ պիտոյ աղօթք նոցա. այլ գերեցէք յամենայն վանորէիցն աղեղնաւորս ի ծառայութիւն իմում թագաւորութեանս: Քանզի յոյժ հաւանեալ էր քաղկեդոնական սահմանադրութեանն՝ ատելի գոլով ամենայն ուղղափառ հաւատոց⁸:

⁵ Գարեգին Ա. Կաթողիկոս, *Յիշատակարանք Ձեռագրաց, Ա. հատոր*, Անթիլիաս, 1951, էջ 260:

⁶ Ալպոմ Քեսապի եւ շրջակայից, Պէյրութ, 1955, էջ 8: Այս շփոթը կու գայ Հ. Ղեւոնդ Ալիշանէն. «Եւ միւս եւս վանք՝ որոյ ոչ յիշի սրբազան անուն, այլ կոչի վանք Պարլերոյ լերին (*Abbatiam Montis Parleri*), որ իցէ թերեւս վանքն Պառլահոյ, այն զոր յիշատակեցաք ի թիւս վանորէից Սեաւ լեռանց» (*Միստան*, Վենետիկ, 1885, էջ 424):

⁷ Տոքթ. Յարութիւն Տէր Ղազարեան, *Հայկական Կրիկիա, Տեղագրութիւն*, Տպ. Կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1966, էջ 67:

⁸ Արիստակէս Լաստիվերցի, *Պատմութիւն*, Վենետիկ, 1901, էջ 31:

Հայր Ղեւոնդ Ալիշան եւ հայր Համազասպ Ոսկեան Կիլիկիոյ վանքերու մասին խօսելով կ'անդրադառնան նաեւ Սեւ լեռան հայոց վանքերուն, ինչպէս՝ Արեգի, Շուղրի, Բարսեղեանց, Վարդկան, Մաշկետր, Քարաշիր, Շափիրի, Պաղակծիակ վանքերը⁹, բայց յատակ տեղադրութիւն գրեթէ չեն յաջողիր տալ. ոմանց «մերձ ի Մարաշ» արտայայտութիւնը մեզ շատ հիսխս կը տանի Անտիոքի սահմաններէն:

Պարկանելիութիւն

Հարց է, թէ Մուսա Լեռան, Քեսապի եւ հարաւի հայ գիւղերուն կից գտնուող քրիստոնէական միջնադարեան կառոյցները ի սկզբանէ հայկական՝ կառոյցներ եղած են, թէ՞ օտար՝ յունական, ասորական, թէ՞ այլ: Հայր Յովհաննէս Մըսրէրեան եւ Վախտանգ Ճոպածէ լայնօրէն կը խօսին իրողապէս կամ ենթադրաբար գործած վրաց եկեղեցւոյ վանական համալիրներու մասին, ինչպէս՝ Քեսապի Պարլումը (St. Barlaam), Եողունօլուքի Ս. Թադէոս Առաքեալը եւն.: Այդ վանական համալիրները գործած են հայաբնակ միջավայրերու մէջ: Այդ դարերու արաբական վկայութիւնները բազմաթիւ են՝ գոյութիւն ունեցող տեղաբնիկ հայոց մասին: Պահ մը ընդունելով հանդերձ քաղկեդոնական հայոց գոյութիւնը, բնական հարց կը ծագի, թէ քաղկեդոնականութիւնը որքա՞ն կրցած է գոյատեւել Անտիոքի շրջանի հայոց մէջ:

Մեծագոյն իրողութիւնը այն է, որ հայերը հոս ունեցած են երեք եպիսկոպոսութիւններ՝ Անտիոքի, Լաւողիկէի եւ Աֆամիոյ: 1179ին Հռոմկլայի ժողովին մասնակցող եպիսկոպոսներուն մէջ կը յիշուի Աֆամիոյ Կոստանդին եպիսկոպոսը Լաւողիկէի Սարգիս եպիսկոպոսին եւ Անտիոքի Գրիգորիս արքեպիսկոպոսին հետ¹⁰: Եւ բնականաբար այս թեմական իշխանութիւններուն տակ գործած են եկեղեցիներ եւ վանքեր:

Կրիդիցիկներն ու վաղ միջնադարեան վանական աւերակները իսկութեան մէջ յատուկ համայնքի մը կամ յարանուանութեան մը չեն կապուիր իբրեւ սեփականութիւն: Անոնք համայնական կալուածներ էին կամ մօտիկ բնակավայրի մը գերեզմանատունը, ուր կրնային թաղումներ ընել բոլոր յարանուանութիւններուն պատկանող հայ ընտանիքները, բայց շատ այցելուներ ունեցող կամ համաժողովրդական ուխտավայրի վերածուած սրբավայրերը դրուած էին գործող հայ առաքելական եկեղեցւոյ, հազուադէպօրէն նաեւ հայ կաթողիկէ եւ լատին եկեղեցիներու հսկողութեան տակ: Աւետարանական եկեղեցին պաշտամունքային աղերսներ չունի անոնց հետ:

⁹ Հայր Համազասպ Ոսկեան, *Կիլիկիայի վանքերը*, Վիեննա, 1957, էջ 295:

¹⁰ Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, Ա. հատոր, Գ. մաս, Բ. հրատ.*, Տպ. Սեւան, Պէյրութ, 1959, էջ 1468:

Ընդհանուր կարծիք կար, որ այս սրբավայրերը հայոց հետ աղերսներ ունին միայն, բայց կային քանի մը սրբավայրեր, ուր հոռոմներն¹¹ ալ առանձին համաժողովրդական ուխտագնացութիւններ կը կազմակերպէին, ինչպէս Քեսապի Ներքի գիւղի մօտ Սիվտիկիը եւ Մուսա Լեռան Պիթիաս գիւղի քով Ս. Եղիայի վանքը:

Ընդունուած աւանդութիւն էր, որ կիղիցիկներու եւ վաղմիջնադարեան սրբավայրերու տարածքին մէջ ամէն ինչ պէտք է մնայ, ինչպէս որ կայ: Անոնց վրայ նոր կառույցներ գրեթէ չկան. անգիր օրէնքով արտօնուած չէ: Կայ ըմբռնում, որ կիղիցիկները յարանուանական բաժանումներէն առաջ հայ առաքելական մատուռներ կամ եկեղեցիներ եղած են, բայց յետագային այդ վայրերը սրբացուած են բոլորին կողմէ ու վերածուած բոլորին պատկանող ուխտավայրի՝ կիղիցիկի: Հոն հայ առաքելականն ալ, բողոքականն ալ, կաթողիկէն ալ իրենց ուխտը ընելու կու գան: Պաշտօնական եկեղեցւոյ վերահսկողութիւն չկայ անոնց վրայ, բայց կան ուխտավայրեր, յատկապէս շատ սիրուած ու համաժողովրդական բնոյթ ունեցողները, ուր ուխտաւորները նուէրներ կը ձգեն՝ սպասք, գումար եւն., ասոնք ուղղակի հայ առաքելական տեղւոյն եկեղեցւոյ հսկողութեան տակ են, ուր եկեղեցւոյ թաղականութեան կարգադրութեամբ պարբերաբար կամ տարին անգամ մը եկեղեցական արարողութիւններ տեղի կ'ունենան: Այս սրբավայրերուն վրայ կը հսկեն տեղւոյն առաքելական եկեղեցւոյ թաղական խորհուրդները, հոգ կը տանին շրջապատի մաքրութեան, ինչպէս մեր օրերուն՝ Քեսապի մօտիկ Ս. Մարութէն: Կարիք զգացուելու պարագային սրբավայրի կալուածէն դուրս, անոր կից՝ մատուռ մըն ալ կը կառուցեն, առանց սրբավայրէն ծառ մը հեռացնելու կամ քար մը տեղափոխելու, ինչպէս Ներքի գիւղի Ս. Աստուածածին մատուռը (1959)՝ կիղիցիկին կից: Միայն մէկ պարագայի, Գարատուրանի Ս. Աստուածածին կիղիցիկի խորանին հիմքին վրայ կաթողիկէները կառուցեցին պեթօնէ խորան, այդ ալ իբրեւ երկու համայնքներու՝ սրբավայրի նկատմամբ սեփականութեան իրաւունքի շուրջ ծագած կամ հնուց անտի գոյութիւն ունեցող հակամարտութեան մը իբրեւ հետեւանք:

Մենք յստակօրէն չենք գիտեր տեղադրութիւնը Անտիոքի առաջնորդանիստ Յեսուանց վանքին, զոր կը դնեն շատ հեռու՝ «մերձ ի Մարաշ»: Չենք գիտեր նաեւ տեղադրութիւնը Վարդան Այգեցիի վանքին՝ Գետիկին: Անդին, ոմանք փորձած են Քեսունի մօտ Շուղրի Կարմիր վանքն ու Ընկուզնիկի վանքը փնտռել Շուղրի քար եւ Բագաս կից բերդերուն մօտիկ Շուղր եւ Ընկըզիկ գիւղերուն մէջ¹²: Բոլորն ալ մերժուած են:

¹¹ Նաեւ՝ ուռում, *ռում*. այս անունով կը ճանչցուին Բիզանդական Կայսրութեան յոյն բնակչութեան յետնորդները՝ այժմու Թուրքիոյ, Մերձաւոր Արեւելքի եւ պալքանեան երկիրներու յոյները:

¹² Յ. Ա. Պ., «Շուղրի կաթողիկոսարանը», *Հասկ*, 1941, էջ 20. նաեւ՝ Բիզանդ Եղիայեան, «Հայեր Սիւրիոյ եւ Լիբանանի մէջ, Ա.», *Հայաստանի կոչնակ*, 3 Յուլիս 1948, էջ 629-31. նաեւ՝ Ա. Գ. Աբրահամյան, *Համառօտ ուրուագիծ հայ գաղթավայրերի*

Պատմական վկայություններ

Անտիոքի հարաւային շրջաններու «հայալուր» բնակավայրերու մասին առաջին ակնարկութիւնը կը վերաբերի Ալիշանի, որ Անտիոքի Ռենալտ դուքսին պատկանող պարգեւագիրէ մը քաղելով՝ Ալուս (Alus) անուն գիւղը կը տեղադրէ Անտիոքի հարաւը, «որ ընդ Վալենիոյ քաղաքի եւ Մարկադայ. երկուքին եւս ի հարաւոյ Անտիոքայ»։ Նոյն ցանկին մէջ «հայալուր» շարք մը անուններ եւս կը նշանակէ, բոլորն ալ Անտիոքի հարաւային կողմը. «*Յորոց գէթ զոմանս ի դէպ է դասել ի կողմանս յայտորիկ եւ զի հայալուր եւս են անուանք նշանակեսցուք զոմանս, որպէս Կոմ կամ Գոմ գիւղ (Come), Պոպոս կամ Բոբոս? բերդ (Bobos), համանուն գիւղիւ. Կազնափոր (Casnapor), Կոլկաս (Colgas), Կորկոնէ (Corcona), Մունծարակ կամ Մունսարակ, տքաասին լինել ի Palmeris լերին: Իսկ Պոտամա (Potama) եւ Բանջերեզուն (Pangeregum) (Բանջարագում?) ի Ռուսէ հովտի, եւս եւ Գորոզ (Gorrosio), Մաստաբ (Mastaba) են.. ընդ սոսին փութալ էր եւ Ս. Գէորգ վանք որ ի թիւս վանորէից Սեան լերին նշանակեցինք»¹³:*

Կը մնայ ըսել, որ Անտիոքի շրջանի հայ միջնադարեան եկեղեցական ու վանական հաստատութիւններուն մասին հայագիտութիւնը տակաւին շատ ըսելիք ունի:

Անանուն, նոյնանուն ուխտավայրեր

Ուխտավայրերէն շատերը անանուն են, կը ճանչցուին այսինչ գիւղի, թաղի կամ արտի անունով՝ Քեսապի շրջանին մէջ Պաղճաղազի կիղիցիկը, Գարատաշի կիղիցիկը: Ոմանք ունին անուն, որ կրնայ ըլլալ սուրբի մը անունը, ինչպէս Գարատուրանի Ս. Գէորգը, Քէօրքիւնէի Ս. Ստեփանոսը, Քեսապի Ս. Մարութէն, Քեպուսիէի Ս. Սարգիսի քարայրը, Արամոյի Ս. Թորոսը: Ոմանց անունը հասարակ բառ մըն է, ինչպէս՝ Մուսա Լեռան վրայ Ճգնատրի քարայրն ու Սուրբ Ուրբաթը, Քեսապի Ներքի գիւղի մօտ Սեւ տիկնոջ կիղիցիկը (Սիվտիկիյը) են.:

Միւս կողմէ, սակայն, վանական կառոյցները սովորաբար անունով յայտնի են, ինչպէս Քեսապի Պարլումը, Արամոյի Ս. Աստուածածին վանքը, Պիթիասի մօտ Ս. Եղիայի վանքը, Եողունօլուքի մօտ Ս. Թադէոս Առաքելի վանքը են., կամ պարզապէս կը յիշուին Վանքը ձեւով: Հայր Մըսրէրեան կը գործածէ Ժողովուրդի՝ տեղոյն հայոց կողմէ ընդունուած անունները՝ Ս. Միքայէլ, Ս. Թովմաս Առաքեալ, Ս. Եղիա, մինչ Ճոպածէ կը մերժէ զանոնք՝ գլխաւորաբար վրաց մատենագրութենէն անուններ ենթադրաբար անոնց

պարմութեան, *հրք. Ա.*, Հայպետիրատ, Երեւան, 1964, էջ 430. նաեւ՝ Մարտիրոս Գուշագճեան, *Մուսա լեռան հայկական գաղթածախը*, Տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1988, էջ 30:

¹³ Ալիշան, *Սիսուան*, էջ 424:

կապելով: Հայր Մըսրըբեան կը խօսի Քեպուսիէ մօտ Ս. Միքայէլ վանքի մասին, զոր Ճոպածէ կը համարէ վրացական եւ հաւանական կը նկատէ, որ նուիրուած ըլլայ Ս. Գէորգի անուան¹⁴: Հայր Մըսրըբեան կը խօսի Եողունօլուքի մօտ գտնուող Ս. Թովմաս Առաքեալի վանքի մասին, մինչ Ճոպածէն Սեւ Լեռներուն վանական համալիրները ներկայացնող ցանկի մը հիման վրայ կ'ենթադրէ, որ եկեղեցին Wood of Life («Lifegiving Cross» վրացերէն թարգմանութեամբ) կը կոչուի, այսինքն՝ Խաչ կամ Խաչափայտ, եւ լայնօրէն ուսումնասիրութեան կ'ենթարկէ զայն¹⁵:

Յատկանշական են նաեւ նոյնանուն ուխտավայրերը: Ուրբաթ անունով երկու տեղ կայ, մէկը Սըբըրբութ կամ Սուրբ Ուրբաթ ուխտավայր քարայրն է Մուսա Լեռ, իսկ միւսը Սուրբ Ուրբաթ աղբիւրն է Ղնեմիէ գիւղին մէջ: Վերջինը արաբախօսները կը կոչեն Շէխ Ճումաա: Շէխ բառը կրնայ նշանակել երէց, աւագ, իշխանաւոր, սուրբ, ուրեմն՝ Սուրբ Ուրբաթ: Ասիկա ծագումնաբանօրէն կու գայ մեր Աւագ Ուրբաթէն, Յիսուսի Խաչելութեան օրը, որմէ ետք, երրորդ օրը ան մեռելներէն յարութիւն առաւ: Խաչելութիւնը մարդոց փրկութեան եւ յաւիտենական կեանքի համար եղաւ, այդ պատճառով ալ տարբեր տեղեր կը կոչուի Լաւ Ուրբաթ, Բարի Ուրբաթ, Սուրբ Ուրբաթ:

գ) Գործող եկեղեցիներ

Առաքելական համայնքի եկեղեցիները հնագոյններն են, կը յիշատակուին իբր «ի հնուց անտի» գոյութիւն ունեցող եկեղեցիներ՝ «կիղիցա»։ Կնագոյնները կու գան ԺԸ. դարու արձանագրութիւններով: Անոնք մեծ մասով տեղւոյն վրայ գտնուած եկեղեցական կառոյցի մը վրան շինուած են կամ լայնօրէն օգտագործած են խոնարհած եկեղեցւոյ մը քարերը: Մըսրըբեան եւ Ճոպածէ կը գտնեն, որ Մուսա Լեռան հայոց եկեղեցիներէն ոմանք իրենց կառոյցին մէջ ունին հին եկեղեցիներէ բերուած քարեր, ինչպէս Քեպուսիայի Ս. Սարգիսը (կառ.՝ 1802ին, այժմ՝ մզկիթ), Խտըրպէկի Ս Փրկիչը (կառ.՝ 1850ին), Եողունօլուքի Ս. Աստուածածինը (կառ.՝ 1790ին, այժմ՝ մզկիթ), Պիթիասի նախկին Ս. Միլիտոսը¹⁶: Ասիկա ակնբախ է յատկապէս Արամօ գիւղի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ պարագային, որուն պատերուն ագուցուած են յայտնապէս հին կառոյցներէ բերուած մեծ ու փոքր խաչքարեր ու քանդակազարդ անկիւնաքարեր¹⁷: Նկատելի է, որ շրջանի եկեղեցիները, նոյնիսկ եթէ կառոյցին մէջ չեն օգտագործած հին, խոնարհած եկեղեցիէ բերուած քարեր, մուտքին կամ գաւիթին մէջ հին կառոյցէ մը բերուած քանդակազարդ քար մը - ընդհանրապէս խոյակ - զետեղած կ'ըլլան: Ասիկա հաւա-

¹⁴ Mésérian, էջ 37. նաեւ՝ Djobadze, էջ 172:

¹⁵ Djobadze, էջ 117-18:

¹⁶ Djobadze, համապատասխանաբար տե՛ս էջ 172, 175-177:

¹⁷ Ատրիանօ Ալփակօ Նովելլօ, «Հայկական ճարտարապետական կոթողները Սուրիոյ մէջ», թարգ.՝ քոյր Թէոպիստէ Մարի Պետրոսեան, *Շիրակ*, Օգոստոս-Սեպտեմբեր 1989, էջ 81-87:

նաբար կ'արտայայտէ այն կապը, որ ունեցած են իրենց նախնիները տարածքին մէջ գտնուած անելի վաղ շրջանի հոգեւոր կառոյցներուն հետ: Այդպիսի մէկական խոյակ ունին Քեսապի Ս. Աստուածածին եւ Քէօրքիւնէի հայ անետարանական եկեղեցիները: Տեղւոյն հայ կաթողիկէ Ս. Միքայէլ եկեղեցւոյ երիցատան մէջ (նախկին լատինաց վանք) կը գտնուին Պարլումի սրբավայրէն բերուած քանդակագարդ քարեր:

ԺԹ. դարու կիսուն շրջանին մէջ ստեղծուեցան հայ անետարանական (բողոքական), հայ կաթողիկէ (կաթոլիկ) եւ անելի ուշ՝ հայերէ կազմուած լատին համայնքներ: Հայութիւնը բաժնուեցաւ չորս յարանուանութիւններու: Այս բաժանումները շատ անգամ եղան մեծ խռովքներով, հին եկեղեցիներն ու գերեզմանատուները կոտախնծոր դարձան, քանդուեցան ու լքուեցան: Նորակազմ յարանուանութիւնները ունեցան իրենց եկեղեցական նոր կառոյցները: Մայր համայնքը, տեղ-տեղ կորսնցնելով հանդերձ, շարունակեց պահել իր եկեղեցիներէն ոմանք իբրեւ հայ զանգուածի մայր եկեղեցի:

Ի տարբերութիւն կիղիցիկներուն եւ վաղմիջնադարեան վանական սրբավայրերուն՝ եկեղեցիները համայնքային եւ յարանուանական սեփականութիւններ են, եկեղեցական թեմական իշխանութեան մը կամ կեդրոնի մը վիճակը կը հանդիսանան, ունին իրենց հոգեւոր հայրը՝ քահանայ, վարդապետ կամ պատուելի, որ ունի իր հօտը կամ ծովսերու քանակ մը: Կ'ունենայ նաեւ աշխարհականներէ կազմուած խորհուրդներ կամ մարմիններ, որոնք կը վարեն եկեղեցւոյ վարչական, տեսչական եւ հոգեւոր եկեղեցական գործերը: Ասոնք, ըստ յարանուանութեան, կ'ունենան տարբեր կազմեր եւ լիազօրութիւններ: Եկեղեցւոյ հօտին ինքնութիւնը կը հաստատուի իր եկեղեցւոյ անունով:

Հասկնալի է, որ եկեղեցիները, ըստ յարանուանական պատկանելութեան՝ կ'ունենան արտաքին եւ ներքին իրայատկութիւններ, տօներու, ծէսերու եւ արարողակարգերու մէջ տարբերութիւններ, որոնք ամէն տեղ նոյնն են մեր իրականութեան մէջ:

Եկեղեցիներն ալ ուխտավայրեր են, թէեւ այստեղ ուխտերն ու խնդրածքները չունին միւս ուխտավայրերուն մէջ երեւոյց ցուցական յատկանիշերը՝ զոհ մատուցել, ուխտապուր պատրաստել, աղար կապել, կարգ մը պարագաներու՝ մանրադրամ դնել կամ փակցնել քարին, սուրբգրային նիւթեր՝ գիրք ու սրբանկար, դնել յատուկ տեղ մը եւն.: Գործող եկեղեցիներուն տրուած դրամական ու այլ տեսակի նուիրատուութիւնները կը յայտարարուին քահանային կողմէ: Անհատական ուխտեր ունեցողները զանազան նուէրներ կը խոստանային գործող եկեղեցիին բարեգարդման համար, ինչպէս՝ բան մը հիւսել՝ դաստարակ, վարագոյր, սպաս մը նուիրել, վերանորոգութեան մէջ բաժին ունենալ: Ուխտաւորի նուէրները կրնային զուտ բարեսիրական նպատակ ունենալ՝ յատկացուելով անկարներու, ծերանոցի, որբանոցի, անկէլանոցի, դպրոցի: Տարածուած երեւոյթ է, որ կի-

դիցիկներն ու վանական աւերակներու ուխտի մեկնողներ՝ նուէրները կը յանձնէին գործող եկեղեցիին:

Անտիոքի շրջանէն դուրս՝ մեծագոյնը «Աւետեաց երկիր» կատարուած ուխտագնացութիւնն էր: Բայց շատեր չէին կրնար կատարել ատիկա, ուստի ուխտը կը կապէին գործող եկեղեցիներէն մէկուն: Այսպէս՝ Հաճի Հապիպլիի Ս. Աստուածածին եկեղեցին (վերանորոգուած 1781ին), «*ուխտաւորեղի էր, ուր Երուսաղէմ¹⁸ ուխտի երթալու կարելիութիւն չունեցող հաւատացեալները կը հանդիպէին, որովհետեւ, ըստ աւանդութեան, անյիշատակ ժամանակներէ ի վեր փոխանցուած է, որ եկեղեցիին մէջ գտնուող արծաթեայ անօթին մէջ զետեղուած փայտախաչի բեկորը մասունք մըն է Յիսուսի հաշտփայտէն*»¹⁹:

ՍՐԲԱՎԱՅՐԵՐՈՒ ՈԳԵՂԷՆ ԷԱԿՆԵՐՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Յատկապէս կիղիցիկները հանդէս կու գան շրջապատի եռամիասնութեան մը մէջ. առաջինը հնավայր մըն է՝ կիղիցիկին շուրջ գտնուող արտերուն մէջ հնութեան հետքեր, կարասային թաղումներ, ոսկորներ, կղմինտրէ կտորներ, երկրորդը՝ հնամենի աղբիւրը, որ առհասարակ Գապ կը կոչուի, երրորդը՝ նոյնինքն ուխտավայրը: Ահաւասիկ այս եռամիասնութեան մէջ կը գտնուի «գանձը»: Ի՞նչ է գանձը՝ իրողապէս ոչ ոք գիտէ, ջուրը, եկեղեցւոյ սրբութիւնը, թէ՛ իսկական հարստութիւն՝ գանձ:

Հակառակ անոր որ ըստ ժողովրդային հաւատալիքներու՝ բոլոր սրբավայրերն ալ ունին իրենց պահապան սուրբերը՝ Ս. Աստուածածինը, Ս. Գէորգը, Ս. Սարգիսը, Ս. Աննան, Ս. Ստեփանոսը, Ս. Մարութն եւն., այդուհանդերձ, շատ սրբավայրերու մասին պատմուող գրոյցներուն մէջ ուրիշ էակներու եւս կը հանդիպինք: Ասոնք պահապան էոյթներ են՝ հեքիաթի եւ իրականութեան խառնուրդ. ասոնք պահապաններն են սրբավայրին, ջուրին ու գանձին եւ կը յայտնուին միայն այս սրբավայրերուն հետ կապուած գրոյցներուն մէջ:

Պահապանը.-

ա) Մարդակերպ էակ մըն է, սրբավայրին սուրբը. ըստ գրոյցներու՝ անիկա սրբավայրի կանգուն եղած ատենի վերջին եկեղեցականն է, կը կոչուի Կիղիցիկ Պապուկ. ան մարդոց կը ներկայանայ երկար մօրուքով, ձեռնափայտով ու լրիւ ճերմակ պարեգօտով: Կիղիցիկ Պապուկի ներկայութիւնը կը կապեն գրեթէ բոլոր կիղիցիկներուն հետ: Արամոյի մէջ այս ոգին նոյն կերպարանքով երեւցած է ոմանց ու կը կոչուի Շէխ:

բ) Կանացի կերպարանքով էակ մըն է, որ ունի կնոջ մը բոլոր յատկանիշերը, կը լոգնայ, կը սանտրուի, կ'երեւի այր մարդոց ու կը չքուի: Կը կոչուի

¹⁸ Երուսաղէմ ուխտի գացածներուն՝ *հաճի* (ուխտաւոր) կ'ըսէին: Աւելի հինները գործածած են *մուղղըսի* (արաբերէն՝ երուսաղէմցի) բառը:

¹⁹ Զօրա Իսկէնտէրեան, «Հաճի Հապիպլի», *Յուշամատենան Մուսա Լեռան*, էջ 75:

Սիվտիկի, ու կապուած է Ներքին գիւղի համանուն ուխտավայրին հետ: Եագուպիէի Ս. Աննա ուխտավայրին հետ կապուած գրոյցներուն մէջ Ս. Աննան կ'երեւի լրիւ ճերմակ զգեստով ու թագով, անոր կ'ընկերանան երեք եղբայրները, որոնք կը պաշտպանեն գիւղն ու սրբավայրը: Կիղիցիկ Պապուկին եւ Սիվտիկիին պատիժները զգուշացումներ են կամ միջոցներ՝ սրբավայրէն առնուած որեւէ բան իր տեղը վերադարձնելու կապակցութեամբ:

Այս պահապան-ոգիները սրբավայրի պահապաններն են ու չեն արտօներ, որ սրբավայրի պուրակէն մարդիկ ծառ հատեն, հողամաս գողնան, քարերը տեղափոխեն, դռնակը տանին, հաւատացեալներու հոն ձգած մանրադրամները գողնան: Զրոյցներուն մէջ գողցուած դուռը կոնակէն վար չ'իջներ, խաչագողը կուզիկ կը դառնայ, տեսողութիւնը կը կորսնցնէ, ծանրօրէն կը հիւանդանայ՝ մինչեւ գողօնին տեղը վերադարձնելը: Զրոյցներուն մէջ ասոնք անուն-մականունով կը յիշուին: Պատիժը սահմանուած է ոչ միայն հայերուն, այլ բոլորին՝ դաւանափոխ ու կրօնափոխ հայերուն, արաբին, թուրքմէնին, ալաուիին²⁰, քուրտին, որոնք նոյնպիսի բարեպաշտութեամբ կը մօտենան այս վայրերուն ու ձեռք չեն երկարեր անոնց ու կը հաւատան, թէ այսինչ կիղիցիկը հոգեկան հիւանդութիւններ կը բուժէ, այնինչը մանչ գաւակ կը պարգեւէ, այնինչը կորսուած հարազատի մը տունդարձին կ'օգնէ եւն.²¹:

գ) Կիղիցիկ Պապուկի առնչութեամբ գրոյցներուն մէջ կայ նաեւ *արվանդ* անունով յիշուող վիշապը, որ կը պատկերացուի սովորաբար օծի կամ այլ կենդանի արարածի մը (ծովաշուն, կէտ, ոչխարակերպ էակ, լուսեղէն կերպարանք, նոյնիսկ՝ ծովային թարթառ) կերպարանքով: Տարածքի ժայռերուն վրայ գոյացած ոլորանները կը համարուին օծին հետքը, որ դէպի «գանձ»ը կը տանի: Արվանտը Կիղիցիկ պապուկին հետ կ'երեւի հաշտ վիճակով, անոր պատճառած կամ պատճառելի պատիժը աւելի ահաւոր է գանձագողներուն նկատմամբ: Արվանտը կամ վիշապը ըստ էութեան չար է, իբրեւ մանուկներ կուլ կու տայ, բայց դեր ունի սրբավայրերու պաշտպանութեան մէջ: 1 Յուլիս 1974ին Գարատուրանի Վերի թաղի կիղիցիկին մօտ

²⁰ Ալաուիները հաւաքական ուխտագնացութիւններ ալ կ'ընեն այսպիսի սրբավայրերուն: Արամոյի Ս. Աստուածածնայ Վերափոխման ուխտագնացութեան անոնց մասնակցութեան մասին գրուած է. «Սուրբ Աստուածածնի փօնին նոյնիսկ շրջակայ Նուսէյրի կոչուած արեւապաշտ ազգերէն եկողներ կ'ըլլան ընծայաբերութեամբ» (Այծեամ, «Նմուշ մը Արամօ գիւղին հայ լեզուէն», *Հանդէս ամսօրեայ*, 1:1907, էջ 27: Նուսէյրիները նոյն ալաուիներն են, շիա դաւանանքին մէջ անկախ յարանուանութիւն մը, որ իր անունը կ'առնէ Ալի Պըն Ապի (Թալէպ խալիֆայէն): Ս. Աստուածածին եկեղեցոյ ձախակողմեան խորանին մէջ այժմ դրուած է *փարիհ* (խորհրդանշական գերեզման), ծածկած կանաչ լաթերով, ու «Եա խըտըր» կանչելով եւ ընծաներով անոր ուխտի կու գան:

²¹ Այսպիսի գրոյցներու հաւաքածոյ մըն է Ներսէս քին. Թաթարեանի Ս. *Աննա մարտիր* եւ *անոր հրաշքները* գիրքը (Հալէպ, 1963):

ջրհորին մէջ 5 անձանց մահուան աղէտը տեղացիք կը բացատրեն իբր «Կի-
ղիցիկ պապուկն ու արվանտը պատժեցին թաղեցիները»: Ոմանք կը հա-
մարձակէին ըսել «*Թի գիւրիս արվանտը պըլղից գիրինք*» (Կարծես ար-
վանտը կլանեց գիրենք), թէեւ եղածը պարզապէս թունաւորում նկատող-
ներուն կողմէ կշտամբանքի կ'արժանանային:

Չափազանց հետաքրքրական է չորրորդը, որ մարդոց կը ներկայանայ
լուսեղէն կերպարանքով կամ ամբողջապէս ճերմակ հագած երկու համան-
ման մարդոց տեսքով: Զրոյցներուն մէջ ասոնք կը ներկայանան առանձին
մարդոց քուն, թէ արթուն վիճակի մէջ ու կը յայտնեն գանձին տեղը. պայ-
մանով որ մարդը այդ մասին ոչ ոքի ըսէ, երթայ առանց ետեւ նայելու, գա-
նձին տիրանալու պարագային՝ գաղտնիքը ոչ ոքի յայտնէ²²:

Շատ զրոյցներու մէջ վերոյիշեալ ոգեղէն էակները չկան, չկան նաեւ
սուրբերը, բայց պատիժը բնականաբար կը հասնի, սրբավայրին պաշտ-
պանութիւնը կը կայանայ:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուխտագնացութիւնները կ'ըլլային անհատական, ընտանեկան կամ թա-
ղային, բայց մեծագոյնները հաւաքական ուխտագնացութիւններն էին:

Հաւաքական ուխտագնացութիւնները երկու խումբի կը բաժնուին.-

- Գիւղի մը կամ մէկ-երկու գիւղի բնակիչներուն համար. ասոնք տեղա-
կան ուխտագնացութիւններ էին:

- Ամբողջ շրջանի հայութեան համար: Ասոնք համաժողովրդական ուխ-
տագնացութիւններ էին:

Անկախ աշխարհագրական հեռաւորութենէն, իրարմէ 6-12 ժամ հետի-
ոտն ճամբորդութեամբ, այս շրջանակները իրարու հետ կը պահէին հաղոր-
դակցութեան զանազան կապեր՝ ազգակցական-ընտանեկան, առեւտրա-
կան, յարանուանական ու կուսակցական: Օրինակ, Քեսապի մէջ միշտ ալ
եղած են *Սիվկիցա*, *Արամալցա*, *Արֆալցա*, *Եագուպիացա* կոչուող հարսեր:
Մուսալեռցիներու եւ քեսապցիներու միջեւ եղած է ժառանգական կնքահայ-
րութիւն, մինչեւ այսօր ալ անոնք գիրար *շըպէն* (արաբերէն՝ կնքահայր, քա-
ւոր) կը կոչեն: Այս շրջանակներու մէջ, մասնաւորաբար հարաւէն հիւսիս ըն-
տանիքներու տեղաշարժ եղած է ԺԹ. դարուն եւ անկէ ետք, Քեսապի մէջ
հաստատուած են Արամոյէն, Ղնեմիէն ու Քիւրտ Տաղէն եկած ընտանիք-
ներ, ինչպէս՝ Սարամազեան, Արամեան կամ Արամայի, Քորթեան եւ Մահ-
տեսեան ընտանիքներ, Սուեւիոյ եւ Պէլլանի մէջ կան Քեսապլեաններ եւն.:
Եղած են արիեստակցական ու առեւտուրի կապեր, ապրանքափոխանա-
կում եւն.: ԺԹ. դարուն բոլոր գիւղերու խոզակի բերքը կը տեղափոխուէր

²² Յակոբ, Չոլաքեան, «Վիշապը (արվանտ) Քեսապի հայոց հաւատալիքներուն
մէջ», *Վիշապը հեքիաթի եւ իրականութեան սահմանին*, հրատ.՝ ՀՀԳԱԱ ՀԱԻ,
Երեւան, 2019, էջ 215-24:

Լաւշիէ, Խտըրպէկ եւ Անտիոք: ԺԹ. դարու կէսերէն կ'աւելնան հոգեւոր-եկեղեցական եւ կրթական կապերը: Այս շրջանակներէն բազմաթիւ քահանաներ, պատուելիներ, վարժապետներ եւ վարժուիիներ կը գործէին հոս ու հոն, օրինակ 1856ին Եագուպիէ կանչուած Տէր Ստեփանը քեսապցի էր, Շահպազեան ընտանիքէն, անկէ կը սերին Եագուպիէի Գասսիս-Երէցեան տոհմի ընտանիքները, Արամոյի, Ղնեմիէի, Արֆալիի ուսուցիչները եղած են քեսապցիներ, մուսալեոցի էին Քեսապի մէջ երկար տարիներու ծառայութիւն ունեցած վերապատուելիներ Տիգրան Անդրեասեանն ու Կարապետ Թիլքեանը:

Ազգային գաղափարական զարթօնքի օրերուն գործակցութեան եւ փոխադարձ շփումներու դերակատար եղաւ Հնչակեան Կուսակցութիւնը, որ 1892ին Մուսա Լեռան Խտըրպէկ գիւղէն սկիզբ առնելով հասաւ Քեսապ եւ հարաւի միւս հայախօս եւ արաբախօս գիւղերը: Ասոր նպաստը եղաւ նաեւ այն, որ ազգային ապրումներով վերստին եղբայրացաւ յարանուանապէս բաժնուած ժողովուրդը: Դաշնակցութիւնը շրջանին մէջ երեւցաւ 1908էն ետք. անոր հետ կը կապուի նաեւ նորադաւաններուն, յատկապէս աւետարանական, մայր եկեղեցւոյ վերադառնալու միտում մըն ալ:

Այս բոլորէն վեր, փոխադարձ կապի եւ շփումներու տեսակէտէն մասնաւոր նշանակութիւն ունեցած են համաժողովրդական ուխտագնացութիւններն եւ ուխտավայրերու ժողովրդական տօնակատարութիւնները: Ասոնք շատ կարեւոր իրադարձութիւններ էին Անտիոքի շրջանի՝ այլազգի գիւղերով ու շրջաններով բաժնուած հայերը տարին քանի մը առիթներով համախմբելու ուխտավայրերու տարածքին մէջ:

Իւրաքանչիւր շրջանակի մէջ կային համաժողովրդական ուխտագնացութեան առիթներ եւ վայրեր: Բուն առիթներն էին Հայ Եկեղեցւոյ երեք տաղաւար տօները՝ Վարդավառը, այսինքն՝ Քրիստոսի Պայծառակերպութեան տօնը, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Իսաչվերացը: Աւանդաբար՝ Վարդավառի համաժողովրդական ուխտագնացութեան գլխաւոր վայրը Քեսապի Պարլում ուխտավայրն էր, Ս. Աստուածածնայ ուխտագնացութեան գլխաւոր վայրը՝ Արամոյի Ս. Աստուածածին վանքը, իսկ Ս. Իսաչի ուխտագնացութեան գլխաւոր վայրը՝ Մուսա լեռ, Ս. Թովմաս առաքելի վանքը: Տաղաւար տօներէն դուրս կար նաեւ Ս. Գէորգի (ապա՝ Ս. Աննայի) համաժողովրդական ուխտագնացութիւնը Ճսըր Շուղուրի մօտ Եագուպիէ գիւղի «Արեւմտեան եկեղեցի»: Ասոնց կը մասնակցէին Անտիոքի գրեթէ բոլոր վայրերէն եկող ուխտաւորներ: Համաժողովրդական ուխտագնացութիւնները կը կազմակերպուէին ու կը հովանաւորուէին թեմական առաջնորդներու կամ կաթողիկոսական փոխանորդներու կողմէ²³:

²³ Յակոբ Չոլաքեան, «Կասիոս լեռը Անտիոքի շրջանի հայոց աւանդազրոյցներուն եւ հաւատալիքներուն մէջ», *Աւանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում 1*, ՀԱԻ հրատ., Երեւան, 2018, էջ 313-27. նաեւ՝ Յակոբ Չոլաքեան, «Արամօ գիւղի մօ-

Այս տոներուն առթիւ կային նաեւ այլ ուխտավայրեր, ուր նոյն օրերուն կ'ըլլային տեղական ուխտագնացութիւններ՝ տուեալ գիւղի կամ քանի մը գիւղերու բնակիչներուն կողմէ: Տեղական ուխտագնացութիւնները կրնային ըլլալ նաեւ տարբեր առիթներու, ամիս եւ ամսաթիւ չունէին եւ կը կազմակերպուէին ինքնաբոլի կերպով: Օրինակ՝ երաշտ տարիներուն անձրեւաբեր Ս. Եղիայի ուխտագնացութիւնը Ս. Եղիա, Մուսա Լեռ, քեսապցիներու ուխտագնացութիւնը Ս. Սարգիս, Մուսա Լեռ, հունձքի աշխատանքներէն ետք եւն.:

Ըսինք՝ համաժողովրդական ուխտագնացութիւններուն կը մասնակցէին ոչ միայն տուեալ գիւղի ու շրջանի բնակիչները, այլեւ ուխտաւորներու մեծ կարաւաններ՝ Անտիոքի շրջանի միւս բնակավայրերէն: Հոն այս տարբեր շրջանակներու մարդիկ միացած են ոչ միայն ուխտով, այլեւ՝ հաստատած ծանօթութիւններ, խնամիութիւն, արհեստակցական ու առեւտրական կապեր, ճանչցած իրարու բարքերն ու սովորութիւնները, բարբառներու առանձին յատկանիշերը, իրարմէ սորված իրենց պարերը, երգերը, խաղերը: Հաւաքական ուխտագնացութիւնները հոգեւոր եւ նիւթական մշակոյթի մեծ իրադարձութիւններ էին, որոնցմով պայմանաւորուած էին ոչ միայն անոնց գոյութիւնն ու զարգացումը, այլեւ համանման արժէքներու բացայայտումն ու պահպանումը:

Հայ եկեղեցւոյ տոներուն առթիւ կատարուող համաժողովրդական ուխտագնացութիւնները կազմակերպելու գործին մէջ հիմնական դերակատարութիւն ունէին թեմակալ առաջնորդները, այս պարագային՝ Լաթաքիոյ հոգեւտան տեսուչ եւ Ճսըր Շուղուրի, Լաթաքիոյ եւ Անտիոքի կաթողիկոսական փոխանորդները, իսկ 1927էն ետք՝ Բերիոյ թեմի առաջնորդները: Անոնց պարտականութիւնն էր եկեղեցական բոլոր բեմերէն յայտարարութիւն կատարել համաժողովրդական ուխտագնացութեան մասին, կապ հաստատել ուխտավայրի շրջանին մէջ գործող եկեղեցւոյ կամ մօտիկ քանի մը եկեղեցիներու *մութաուլլի* կամ թաղական խորհրդոց՝ պարտ ու պատշաճ կարգադրութիւնները տեսնելու եւ որոշեալ օրը առաջնորդը դիմաւորելու համար: Անպայման տեղեակ կը պահուէին վարչական տարածքի կառավարիչը (*միւսրի*) եւ ոստիկանութիւնը: Օսմանեան իշխանութեան ատեն կային ուխտաւորներու ճամբորդութիւնները եւ ուխտավայրի ապահովութիւնը կարգաւորող յատուկ միաւորներ:

տիկ հայոց վանքը Ս. Աստուածածին եւ Ս. Գէորգ եկեղեցիներով», *Բանբեր Երեւանի համալսարանի*, 2(34):2021, էջ 30-44. նաեւ՝ Ներսէս քին. Թաթարեան, *Ս. Աննա մալուղը եւ անոր հրաշքները*, Հալէպ, 1963. նաեւ՝ Յակոբ Չոլաքեան, *Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը*, Անթիլիաս, 2006, էջ 191-95. նաեւ՝ Խաչեր Մատուռեան, «Եողուն-Օլուք», *Յուշամատեն Մուսա Լեռան*, էջ 93. նաեւ՝ Ալպէտ Ս. Թէմիրեան, *Քէսապ*, Տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1956, էջ 43-44:

Տաղաւար տօներու ուխտագնացութիւնները կ'ըլլային գլխաւորաբար Շաբաթ եւ Կիրակի օրերուն: Գրեթէ բոլոր ուխտագնացութիւնները նոյն ձեւով կը կատարուէին: Ուխտաւորները նախատօնակի երեկոն տեղ հասած պէտք է ըլլային: Հեռաւոր տեղերէ եկողները այդ օր ճամբայ ելած ու վանքի կից գտնուող բացատին մէջ *չէրդիկները* (հովուական վրան) լարած կ'ըլլային, բեռնատար կենդանիներուն տեղ գտած, ջուրի խնդիրը լուծած՝ ուսով կամ բեռնատար կենդանիով տիկերով ջուր ամբարած: Բոլոր ուխտավայրերն ալ աղբիւր ունէին: Ուխտաւորներէն ոմանք կ'իջեանէին մօտիկ գիւղին մէջ բարեկամ-ազգականի մը տունը: Ուխտաւորները իրենց ընծաները՝ մատաղցու խոյ եւ հիրիսացու ցորեն, կը յանձնէին պատասխանատու մարմնին, ապա ներկայ կ'ըլլային երեկոյեան ժամերգութեան: Քահանայ հայր մը կ'օրհնէր խոյերը, որոնց ափով աղ կը կերցնէին: Տեղւոյն եկեղեցւոյ իշխանութեան հսկողութեամբ երիտասարդները կրակի վրայ կը դնէին մեծ պղինձները ու մինչեւ առտու կը հսկէին հերիսային:

Գրեթէ բոլոր համաժողովրդական ուխտագնացութիւններու միակ ուխտապուրը հերիսան է (Քեսապ՝ *հիրիսէ'պէօր*, Սուեփա՝ *քիշկէկ*): Հերիսայի ցորենի լուացումը կը կատարէին կիները, աղբիւրին առջեւ, իսկ երիտասարդները կը կատարէին ցորենծեծը: Շատ ուխտավայրեր ունէին ցորենծեծի սանդեր եւ կամ պաթոս: Օրէնք էր, որ զենումը կատարող, ցորենը ծեծող ու հերիսայի եփին հսկող մարդոց յանձնուէր մատաղի թոքը, երիկամները, սիրտը եւ այլ մասեր, որոնք հերիսայի կաթսաներուն մէջ չէին դրուեր: Այս մարդիկ բացօթեայ խոհանոցին շուրջ մինչեւ առտու կը կազմակերպէին խնճողքներ ու խաղեր, կը հսկէին հերիսայի եփին: Անդին՝ վրաններու շրջապատին մէջ կը բացուէին հաւաքական սեղաններ ու ամէն մարդ, իր խաշարը դնելով սեղանին վրայ, կերուխում կ'ընէին, կ'երգէին, իրենց բարբառներով պարերգեր կ'ընէին. կը պարէին զանազան նուագարաններ գործածելով՝ գաւալ, շուպապիկ, արղուր, ճումպուշ ասելի ուշ ժամանակներուն՝ նաեւ ջութակ եւ ձեռնադաշնակ: Կը կատարուէին հայերէն, թրքերէն, արաբերէն երգեր: Հայերէն ազգային-յեղափոխական, աշուղական եւ ժողովրդական երգերը սկսան տարածուիլ ԺԹ. դարու վերջերէն:

Ամենէն աշխուժ միջավայրը բուն հրապարակը կ'ըլլար, ուր կեդրոնի խարոյկին շուրջ կը փչէր զուռնան, կը թնդար թմբուկը, ու ծայր կ'առնէին շուրջպարերը, զուգապարերը, մենապարերը ու զանազան խաղեր. այստեղ պարն ու նուագը, խաղն ու ծափը մինչեւ առտու կը տեւէր: Խաղահրապարակը մեծ բազմութեամբ շրջապատուած կ'ըլլար:

Բոլոր համաժողովրդական ուխտագնացութիւններուն կը փոթային հասնիլ նաեւ շրջուն վաճառորդները՝ ուխտաւոր բազմութեան վաճառելու համար քաղցրաւենիք, օշարակներ, այդ միջավայրի տնտեսական յատուկ իրեր ու սարքեր՝ սանտրեր, փայտեայ շերտփներ, նուագարաններ եւն.:

Կիրակի առաւօտ Ս. Պատարագն էր, հերիսայի օրհնութիւնը եւ բաշխումը, որմէ ետք ժողովրդային պարերն ու խաղերը կը շարունակուէին հրա-

պարակին մէջ: Ուխտաւորները կը կատարէին իրենց ուխտերը՝ մկրտութիւն, հերահատում եւն.:

Անտիոքի շրջանի հայոց համաժողովրդական բոլոր ուխտագնացութիւններուն կը մասնակցէին նաեւ յոյներ, ալաուիներ, թիւրքմէներ, քիւրտեր ու արաբներ եւ տեղ կը գրաւէին խաղահրապարակին մէջ իրենց երգերով ու պարերով: Շուրջպարի իւրաքանչիւր նոր դարձին թմբկահարը «սապաշ» կը ստանար շարք մտած *պարպաշէն* ու սապաշ կանչելով կը գովէր անով ներկայացուած ուխտաւորները, ուխտավայրը, գիւղը, տոհմը, հիւրերը եւն.: Այս համաժողովրդական ուխտագնացութիւններուն միջցեղային բախումներ երբեք չեն արձանագրուած²⁴:

1920ականներէն ետք Անտիոքի շրջանի հայոց այս մեծ ուխտագնացութիւններուն հետզհետէ մեծ թիւերով սկսան ներկայ ըլլալ հայ նոր գաղթականութեան մաս կազմող ընտանիքներ եւ միութենական խումբեր, որոնց համար այս միջավայրը թէ՛ ամառանոցային եւ թէ՛ ազգային իմաստով կարեւորութիւն կը ներկայացնէր: Ասոնք եւս իրենց տոհմիկ պարերով ու երգերով նոր երանգ մը ւելցուցին այս ուխտագնացութիւններուն վրայ:

Հեռաւոր տեղերէ եկողներուն համար ասիկա քառօրեայ ուխտագնացութիւն էր:

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ, ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1939ի սահմանագծումով եւ հայերու գաղթով Պէյլանի, Մուսա Լեռան եւ Օրտուի հարաւի հայ բոլոր սրբատեղիները լքուեցան: Հոն շարունակեցին գործել միայն Վազըֆ գիւղի Ս. Աստուածածինը եւ Աղեքսանդրէթի Ս. Քառասնից մանկանց եկեղեցին: Շրջան մը գործեց նաեւ Գրըգիսանի Ս. Աստուածածին եկեղեցին: Քեսապի Պարլումի ուխտավայրը նոյնպէս Թուրքիոյ անցաւ: Այնտեղ կատարուող Վարդավառի ուխտագնացութեան փոխարէն Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ սուրիահայութեան համար համաժողովրդական ուխտագնացութեան վայր դարձաւ Ներքի գիւղի Ս. Աստուածածինը: Քեսապի եւ շրջակայ գիւղերու գործող եկեղեցիներէն բացի՝ նախկին ուխտավայրերէն ոմանք կը շարունակեն ունենալ իրենց այցելուները: Մինչեւ 2012ի ծայրայեղ իսլամականներու ներժուժումը՝ համաժողովրդական ուխտագնացութիւն կը կազմակերպուէր նաեւ Եագուպիէի մէջ Ս. Աննա եկեղեցւոյ մէջ: Ներկայիս, Լաթաքիոյ եկեղեցին կը գործէ: Արամոյի Ս. Ստեփանոս եւ Ղնեմիէի Ս. Գէորգ եկեղեցիները կը շարունակեն մնալ հայրենակիցներու եւ հաւատացեալներու հոգածութեան առարկայ:

²⁴ Ուխտագնացութիւններու մասին շարք մը յուշեր ունի Թադէոս Պապիկեան՝ «Խաչվերացի օրը մեր գիւղերուն մէջ», *Քոյիս*, 1979:1987, էջ 20. նաեւ՝ «Ձուտ հայաբնակ գիւղը՝ Վազըֆ», *Քոյիս*, 1022:1990, էջ 22. նաեւ՝ «Տօնակատարութիւնները մեր կորսուած աշխարհին մէջ», *Քոյիս*, 1051:1992, էջ 48. նաեւ՝ «Տօներ եւ տօնակատարութիւններ մեր գիւղերուն մէջ», *Քոյիս*, 1037:1989, էջ 16. նաեւ՝ «Յուշեր գաւառէն – Վէնքը (Վանքը)», *Քոյիս*, 1009:1989, էջ 29:

NATIVE ARMENIAN PILGRIM SITES IN NORTHWESTERN SYRIA

(Summary)

HAGOP CHOLAKIAN (hagopcholakian@hotmail.com)

The paper focuses on native Armenian pilgrimage sites in north-western Syria, which include Beylan, Musa Ler, Kesab, the Roudje Valley, and the Deriya Mountains. These sites are categorized in three groups: a) small sanctuaries, like ruined chapels, caves, cemeteries, springs, trees, b) ruins of early medieval temple precincts, c) currently functioning churches.

The author notes that according to popular belief, all these sanctuaries have their guarding saints, Surp Mariam Asdvadzadzin, Surp Kevork, Surp Sarkis, Surp Anna, Surp Sdepannos, Surp Maruke, etc. He argues, however, that people believe that within each of these, the old sanctuary, the ruined church and the old spring, there are two guardians who guard the “treasure”. One of them is the Gighitsig Babug, who has the physical features of a human being, and the other the dragon Arvand, who has different forms and lives peacefully with Gighitsig Babug.

The author notes as well that there used to be three sorts of pilgrimages: individual, local and on a district level, which were organized under the patronage of the prelate of the Armenian Orthodox Church. The ceremony included the slaughtering of the sacrifice, the mass, the preparation of *herisa* (the dedicated food) and the popular celebration. Local pilgrimages were organized by the local priest, and the ceremony followed a similar ritual. Individual or family pilgrimages were conducted in any sanctuary.